

Արձանագրություն N°9/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. մայիսի 13-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեցը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը՝ ի լրումն ընդգրկելով նաև մագիստրոսի նոր կրթական ծրագրի հաստատման մասին հարցը:

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. ԵՊՀ 2021-2025 զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան):

Ընթացիկ հարցեր

- 3.1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին:
- 3.2. ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի» գիտաուսումնական կենտրոն ստեղծելու մասին:
- 3.3. Հաղորդում ԵՊՀ պարբերականների թվայնացման, միջազգայնացման գործընթացի մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
- 3.4. Հաղորդում ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան):
- 3.5. Մագիստրոսի նոր կրթական ծրագիրը հաստատելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված փոփոխությամբ:

1.Լսեցին.- Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ՝ նշելով, որ դոցենտի կոչման 5 հավակնորդից 5-ի վերաբերյալ հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» պահանջներին համապատասխան:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Գուլյան Անահիտ Գևորգի	ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի ասիստենտ
2.	Դավթյան Նարինե Գառնիկի	պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ
3.	Սարգսյան Դիանա Յուրիկի	ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասիստենտ
4.	Մանուկյան Նարինե Գագիկի	անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
5.	Կարապետյան Լիլիթ Գառնիկի	ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Սահակյան Արթուր (նախագահ)
2. Բարաջանյան Արսեն
3. Մարգարյան Նարեկ

Կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Սահակյանը ներկայացրեց, փակ-գաղտնի քվեարկության արդյունքները, ըստ որի քվեարկությանը մասնակցել է գիտական խորհրդի 66 անդամ:

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Գուլյան Անահիտ Գևորգի	65	1	0
2.	Դավթյան Նարինե Գառնիկի	65	1	0
3.	Սարգսյան Դիանա Յուրիկի	66	0	0
4.	Մանուկյան Նարինե Գագիկի	65	1	0
5.	Կարապետյան Լիլիթ Գառնիկի	64	2	0

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին. - ԵՊՀ 2021-2026 զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ռազմավարական ծրագրի մշակման

աշխատանքները տևել են մոտ 4 ամիս, ստեղծված են եղել 3 ճյուղային հանձնաժողովներ, ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը խմբագրել է ծրագրի նախագիծը, քննարկել ստորաբաժանումներից ստացված առաջարկները, որոնց մի մասը հաշվի է առնվել և ընդգրկվել նախագծում: Պրոռեկտոր Է. Ասրիյանը ներկայացրեց, որ ռազմավարական ծրագրի մշակման համար կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, շրջանավարտների և ուսանողների, հեռավար ուսուցման վերաբերյալ, գիտելիքի գնահատման վերաբերյալ հարցումներ և այլն, որոնց մասնակցել է շուրջ 10 հազար մարդ: Կատարված հետազոտությունները և հարցումների տվյալները վերլուծվել են և ծրագրի հայեցակարգի և առանձին կետերի մշակման հիմք հանդիսացել: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա. Սադյանի՝ ծրագրում ստորաբաժանումների օպտիմիլացման մասին հարցն արտացոլելու մասին առաջարկին ի պատասխան Է. Ասրիյանը նկատեց, որ ծրագրում օպտիմալացման հարցը վերաբերում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերին, ինչպես նաև ընդունվող ուսանողների թվաքանակին, գիտական հատվածին և այլն: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն ավելացրեց, որ օպտիմալացման գաղափարը տարբեր առումներով առկա է ռազմավարական ծրագրում, ինչը կարող է լինել միավորման կամ բաժանման, նոր կառուցվածքային միավորների ստեղծման ձևով: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանի հարցին ի պատասխան՝ նա նկատեց, որ ռազմավարական ծրագիրը քարացած չէ, և մշտապես կարելի է իրավիճակից կախված կատարել վերանայումներ ու շտկումներ:

Որոշեցին. – Երաշխավորել ԵՊՀ 2021-2026 զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը:

3.Լսեցին.– ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը տեղեկացրեց, որ իրավագիտության ֆակուլտետը դիմել է գոհված համալսարանական Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը հայտնեց, որ «ՀԷՑ»-ը պատրաստակամություն է հայտնել ամսական 70 հազար դրամ գումարի չափով անվանական կրթաթոշակ տրամադրել լավագույն ուսանողին:

Որոշեցին. – Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում 2021/2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սահմանել Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ:

4.Լսեցին.– ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի» գիտաուսումնական կենտրոն ստեղծելու մասին: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա.

Սաղյանը ներկայացրեց, որ կենտրոնն ստեղծվում է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագիրը կազմված էր երկու բաղադրիչներից՝ վերլուծական լաբորատորիայի ստեղծում և մագիստրոսական ծրագրի բացում: Լաբորատորիան արդեն ստեղծված է ԵՊՀ համաֆինանսավորմամբ կատարվել է մոտ 600 հզ դոլարի ներդրում: Ձեռք է բերվել գերժամանակակից 6 սարքավորում և արդեն ստեղծվել է գերժամանակակից լաբորատորիա: «Դեղերի որակի վերասկում» մագիստրոսական ծրագրի հայտն ուղարկվել է լիազոր մարմին և ստացել թույլտվություն:

Որոշեցին. – Ֆարմացիայի ինստիտուտում Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու միջնորդությամբ դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

5.Լսեցին.– Հաղորդում ԵՊՀ պարբերականների թվայնացման, միջազգայնացման գործընթացի մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ աշխատանքներ են իրականացվում ԵՊՀ պարբերականների զարգացման հարցում մի քանի ուղղություններով: Փորձ է կատարվում անցնել «Open journal» համակարգին, ինչը զգալի առավելություններ ունի և էականորեն բարձրացնում է գործընթացի կառավարման հարմարավետությունը: Համակարգում ընդգրկված պարբերականների թիվը 19 է: Անցում է կատարվել «Cross-Ref» համակարգին, հոդվածները ստանում են թվային օբյեկտի իդենտիֆիկատոր (doi): Քայլեր են իրականացվում նաև պարբերականների արխիվացման ուղղությամբ՝ ավելի ժամանակակից և համակարգված դարձնելու համար: Ռ. Բարխուդարյանը կարևոր համարեց համալսարանական պարբերականների ընդգրկումը միջազգային շտեմարաններում, որի ուղղությամբ ևս քայլեր են ձեռնարկվում: Սովորող անդամ Նարեկ Մարգարյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք համալսարանական պարբերականների թիվը շատ չէ և խնդիրներ չեն առաջանա միջազգային շտեմարաններում ներառելու տեսանկյունից: Ի պատասխան՝ ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը համաձայնեց, որ պարբերականների թիվը մեծ է, սակայն արհեստական կրճատմամբ խնդիրը չի լուծվի, այլ պետք է քաջալերել պարբերականներին միջազգային շտեմարաններում ընդգրկվելու համար, ինչը էականորեն բնական ճանապարհով կլուծի այդ խնդիրը: Ռ. Բարխուդարյանը նկատեց, որ Web of Science շտեմարանում պարբերականի ընդգրկման գործընթացը երկար չի տևի, իսկ Scopus-ում դիմում հայտից հետո կպահանջվի մոտ 1 տարի:

Որոշեցին. – ԵՊՀ պարբերականների թվայնացման, միջազգայնացման գործընթացի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

6.Լսեցին.– Հաղորդում ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ

ուսումնական պլաններով նախատեսված է 3 տիպի պրակտիկա՝ ուսումնական, մասնագիտական և մանկավարժական: Ներկայացված հաղորդման համաձայն՝ մի փոքր աճ է նկատվել ուսումնական պարկտիկայի և նվազում՝ մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների թվերի հարցում: Ուսումնական պրակտիկաները հիմնականում իրականացվում են բնագիտական ֆակուլտետներից աշխարհագրության և երկրաբանության, կենսաբանության ֆակուլտետներում, ֆարմացիայի ինստիտուտում, հումանիտար ֆակուլտետներից՝ պատմության, սոցիոլոգիայի ֆակուլտետներում: Մանկավարժական պրակտիկայի վիճակը համավարակի և պատերազմի գործոններով պայմանավորված էականորեն վատթարացել է: Մանկավարժական պրակտիկա իրականացվել է 12 ֆակուլտետների գծով և ստիպված նվազեցվել է պրակտիկա իրականացնող դպրոցների թիվը: Ըստ Հ. Ժամհարյանի՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար որոշ փոփոխություններ են կատարվել մասնագիտական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգում՝ թույլատրելով հեռավար առցանց եղանակով պարկտիկայի անցկացումը:

Որոշեցին. – ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

7.Լսեցին.– ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մագիստրոսական նոր կրթական ծրագրի հաստատման մասին: Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանը ներկայացրեց, որ հաստատման է ներկայացվում իրավագիտության ֆակուլտետի «Մեդիա և տեղեկատվական իրավունք» մագիստրոսի նոր կրթական 1-ամյա ծրագիրը, որն անցել է կրթական ծրագրերի հաստատման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը և փորձաքննությունը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ ներկայացվածը միջառարկայական ծրագիր է, և հիմնական շահառուները գործող և ապագա լրագրողներն են: Ծրագիրը «Ադենաուերի հիմնադրամի» Երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ է մշակվել, որի նպատակը լրագրողների իրավական գիտելիքների բարձրացումն է:

Որոշեցին.– Հաստատել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում «Մեդիա և տեղեկատվական իրավունք» մագիստրոսի նոր կրթական ծրագիրը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

21.05.2021р.